

Ձեռնարկ ԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐԸ ԳՅՈՒՄ

Լևոն ԴՈՒՆՈՒՅԱՆ

ԳՅ Պետական կառավարման ակադեմիայի
“Հանրային կառավարում” ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. քիզնես միջավայր, ձեռնարկատիրության զարգացման
խոչընդոտներ, ձեռնարկատիրական ռիսկ

Ձեռնարկատիրական գործունեության խթանման և զարգացման խընդիրն այն կարևոր հարցն է, որն առաջնահերթության իրավունքով դրված է շուկայական տնտեսության սկզբունքների ակունքներում: Ինչը ենթադրում է, որ վերջինիս նպատակային ու հետևողական լուծման նկատառումներից ելնելով անհրաժեշտ է օբյեկտիվորեն գնահատել ձեռնարկատիրական գործունեության զարգացման նախադրյալներն ու խոչընդոտները:

Յուրաքանչյուր ձեռնարկատեր մինչ ձեռնարկատիրական գործի սկիզբը, ցանկանում է պարզել տվյալ գործունեության տեսակի արդյունավետության և դրա հետ կապված ռիսկերի հարաբերակցությունը, և վերջապես ինչպես կարող է նվազեցնել դրա հետ կապված ռիսկը: Ձեռնարկատիրական ռիսկի նվազեցման խնդիրը հնարավոր է լուծել երկու ուղղությամբ. կամ հրաժարվել ֆիրմայի գործունեության հետ կապված ցանկացած ռիսկից, կամ նվազեցնել ֆիրմայի գործունեության արդյունքների վրա ռիսկի ազդեցության չափը: Այսինքն ֆիրման հնարավորության դեպքում գործունեություն սկսելու որոշում կայացնելուց առաջ, կամ ընթացքում կայացնում է ռիսկից հրաժարվելու որոշումը: Անշուշտ՝ շատ ավելի հեշտ է ռիսկից հրաժարվել նախքան գործունեությունը սկսելը, քան երկրորդ փուլում, երբ ֆիրման հարկադրված դադարեցնում է գործունեությունը՝ կրելով ֆինանսական զգալի կորուստներ: Գործնականում իհարկե ռիսկից ամբողջությամբ հրաժարվել գործնականում հնարավոր չէ, ուստի խնդիր պետք է դնել ոչ թե ռիսկից առհասարակ խուսափել, այլ նվազեցնել հնարավոր բացասական ազդեցությունը, և կրճատել կորուստները, իրականացնելով մի դեպքում ռիսկի բաժանում, իսկ մյուս դեպքում՝ ռիսկի միավորում: Վերջինս վերաբերում է ձեռնարկատիրական ռիսկի կառավարմանը, որն իրենից ենթադրում է համալիր միջոցառումներ, մոտեցումներ որոնք ուղղված են ձեռնարկատիրոջ վրա անցանկալի ներգործությունների վաղօրոք կանխատեսմանը և բացահայտմանը, ինչպես նաև դրանք չեզոքացնելու համար միջոցառումների մշակմանն ու

իրականացմանը¹, այդպիսով նվազեցնելով ռիսկային դրության ազդեցության մակարդակը²: Սա է պատճառը, որ գլոբալացման պայմաններում ձևավորված մրցակցային միջավայրում հաղթող են ճանաչվում ոչ այնքան խոշոր ձեռնարկությունները, որքան իրավիճակի փոփոխությանը արագ արձագանքող ձեռնարկությունները³:

Խոսելով ձեռնարկատիրության և դրանով զբաղվելու հիմնախնդիրների մասին՝ պետք է ներկայացնել այն տարրերի, խթանող և խոչընդոտող գործոնների ամբողջությունը, որոնք, ըստ էության, ձևավորում են այդ միջավայրը, և ի վերջո՝ ներդրումային գրավչության գնահատման հիմք դառնում: Այդ հիմնախնդիրների հետ կապված ռիսկերի վերլուծության համար հիմնականում կիրառում են փորձագիտական մեթոդներ, որոնք հիմնված են գործունեության սպասվող արդյունքների սուբյեկտիվ գնահատումների վրա⁴: Մասնագիտական գրականության մեջ ձեռնարկատիրական ռիսկի գնահատման առավել հանդիպող մեթոդիկաներից է գերմանացիների կողմից մշակած BERI մեթոդիկան⁵, որը հիմնվում են փորձագիտական գնահատականների մեթոդի կիրառման վրա: Ըստ այս մեթոդիկայի՝ հարյուր անկախ փորձագետների հարցումների հիման վրա հաշվարկվում է հատուկ ցուցանիշ՝ ինդեքս, որի միջոցով որոշվում է ռիսկի աստիճանը տնտեսության մեջ:

Այս մեթոդիկայի կիրառման ոճով, ՀՀ ձեռնարկատիրական գործունեության հիմնական խոչընդոտող գործոնների վերաբերյալ բավականին հետաքրքիր տվյալներ է ներկայացված “World Economic Forum”-ի Համաշխարհային մրցունակության Ձեկույցում, որտեղ հիմնականում առանձնացված են 15 գործոններ (BERI մեթոդիկայով ևս 15-ն են, սակայն հարցադրումներում տարբերություններ կան): Հարցումների արդյունքում 1-ից մինչև 5 բալային միջակայքում ընտրվել են առավել ազդեցիկ խոչընդոտող գործոնները, և ըստ հարցվածների մեջ ունեցած բաժնեմասի, գործոնները տեղաբաշխվել են: Այսպես 2008-2014թթ. կտրվածքով պատկերը հետևյալն է ընդհանուր հարցվածների մեջ 10 տոկոս բաժնեմասը գերազանցող ամենամեծ հիմնախնդիրը դա կոռուպցիան է, այնուհետև հարկային կարգավորումը, պետական բյուրոկրատիան, ֆինանսական հասանելիությունը և այլն (տես աղյուսակ 1): Ուշագրավ է նաև այն փաստը, որ արտարժույթային կարգավորման խնդիրը բացասական ազդեցության առումով միայն 2008 և 2010թթ-ին է ետ-

¹ Ареопег М. Управление предпринимательскими рисками, <http://www.areopag.ru/>

² Кадинская О.А., Управление финансовыми рисками, М. 2000, с. 57.

³ Е. Гайкова, А. Шубин, Сколько стоит эффективное управление?, Экономика и жизнь, 11.09.2002, #172.

⁴ Гробовой П., Петрова С., Полтавцев С., Риски в современном бизнесе, М. 1994, с. 131.

⁵ Устенко О.Л., Теория экономического риска, К. 1997, с. 61.

կան դերակատարում ունեցել, այնուհետև սկսել է նվազել, իսկ միջին ցուցանիշը կազմել է 7 տոկոս:

Աղյուսակ 1. Չեռնարկատիրության զարգացման հիմնական խոչընդոտող գործոնները⁶

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2008-2014
Կոռուպցիա	17.5	17.6	16.9	19.9	16.9	15.4	16.4	17.2
Հարկային կարգավորում	15.7	15	16.5	14.5	10.5	11.3	14.3	14.0
Արտարժույթի կարգավորում	10.3	8.3	10	5.2	4.8	4.8	5.8	7.0
Պետական բյուրոկրատիա	10.2	14.2	10.8	14	13.6	13.2	10.1	12.3
Ֆինանսավորման հասանելիություն	8.9	12.7	11.4	8.4	12.7	13.8	14.3	11.7
Ենթակառուցվածքների ոչ ադեկվատ սպասարկում	6.6	6.9	10.5	7.8	7.1	7.3	5	7.3
Գնաճ	6.4	3.3	4.5	6.4	5.4	3.4	3.3	4.7
Աշխատուժի կրթական անբավարար մակարդակ	5.7	5.2	5.4	7.1	9.3	6.1	6.9	6.5
Հարկային դրույքաչափեր	5.6	6.3	7.4	9.2	7.5	11.1	12.2	8.5
Քաղաքականության անկայունություն	5.6	2.2	2.9	2.5	1.2	3.8	2.7	3.0
Ազգային աշխատուժի աշխատանքի ցածր էթիկա	3.4	3.6	1.6	3.3	3.2	3.2	1.4	2.8
Կառավարության անկայունություն, հեղաշրջումներ	2.5	2.3	0.1	0.6	1.2	0.8	1.8	1.3
Սահմանափակող աշխատանքային նորմեր	1.3	1.8	1.7	0.7	2.7	1.3	2.9	1.8
Առողջապահական ցածր մակարդակ	0.4	0	0.2	0.2	0.4	0.6	0.4	0.3
Հանցագործություններ	0	0.5	0.1	0.2	0.3	0	0.5	0.2

⁶ “World Economic Forum”-ի Համաշխարհային մրցունակության 2008-2014թ. զեկույցներ (WEF Global Competitiveness Reports- 2008-2009, 2009-2010, 2010-2011, 2011-2012, 2012-2013, 2013-2014, 2014-2015)

2012-2014թթ Ձեկույցում վերը նշված 15 գործոններից բացի, որպես խոչընդոտ, դիտարկվել է նաև «Նորարարության ոչ բավարար կարողությունների» գործոնը (համապատասխանաբար 3.4, 3.8 և 2.1 բաժնենմասերով), որը սակայն ընդհանուր վերլուծության մեջ չենք ներկայացրել, դինամիկայի վերլուծության նպատակով:

Ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների և առկա ռիսկերի վերը նշված գնահատականը ոչ միայն ցույց է տալիս ձեռնարկատիրական և ներդրումային գործունեության միջավայրը (վնասաբերության կամ եկամտաբերության ռիսկերով), այլև հնարավորություն է տալիս կողմնորոշվել ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման առավել արդյունավետ ուղիներ ընտրելու հարցում:

Դրա հետ մեկտեղ, իհարկե, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ձեռնարկատիրական խոչընդոտներով պայմանավորված ռիսկերի գնահատականը և հաշվարկների հավաստիությունը պայմանավորված են ոչ միայն համապատասխան մասնագետների գիտելիքով ու փորձով, այլև որոշում ընդունելու պահին եղած իրավիճակով⁷, այլ տնտեսական երևույթների և ցուցանիշների հետ համադրությամբ: Ավելին, կարծում ենք, ձեռնարկատիրական գործունեության խոչընդոտների վերացման գործընթացը միայն համապատասխան դրական տնտեսական տեղաշարժի դեպքում կարելի է որակել, որպես ներդրումային գրավչության բարձրացման հաջողված քաղաքականություն, քանի որ հաճախ, զուտ փաստաթղթային բարեփոխումները զրոյական արդյունք են տալիս: Այս առումով, փորձել ենք ներկայացնել մի քանի կարևոր տնտեսական ցուցանիշների և վերը նշված ձեռնարկատիրության զարգացման հիմնական խոչընդոտող գործոնների (ընտրվել են առավել ազդեցիկ 7 գործոններ) զարգացումների փոխադարձ կապը (տես աղյուսակ 2):

Ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտող գործոնների վերաբերյալ հարցումների արդյունքում, առավել մեծ կշիռ ունեցողը կոռուպցիան է՝ միջինը 17.2 տոկոս ցուցանիշով: Այս գործոնի բաժնենասը 2009-2014թթ բարելավվել է միջինը 0.18 տոկոսային կետով, երկրորդը հարկային կարգավորման խնդիրն է, որը նշված ժամանակում բարելավվել է միջինը 0.23 տոկոսային կետով, պետական բյուրոկրատիան բարելավվել է՝ 0.02, ֆինանսական հասանելիությունը՝ վատթարացել 0.9, հարկային դրույքաչափերինը՝ վատթարացել է 1.1, Ենթակառուցվածքների ոչ ադեկվատ սպասարկումը բա-

⁷ Արմինե Մինասյան « Ձեռնարկատիրական ռիսկի գնահատման ժամանակակից մեթոդական մոտեցումները և չափորոշիչները», Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, #10 (136). հոկտեմբեր, 2011, էջ 41.

րելավել է 0.27, արտարժույթի կարգավորումը՝ 0.75 տոկոսային կետերով, որոնց զուգահեռ ՅՆԱ հավելաճը կազմել է միջինը 1.55 տոկոս, ՀՀ մրցունակության ցուցանիշը բարելավվել է 0.05 կետով, իսկ իրական հատվածում ՕՈՒՆ-երի հավելաճը կազմել է -10.57 տոկոս: Բացասական տեղաշարժ նկատվում է միայն ֆինանսավորման հասանելիության և հարկային դրույթաչափերի գործոնների դեպքում: Մնացած գործոնների և տնտեսական այնպիսի ցուցանիշների միջև, ինչպիսիք են ՅՆԱ տարեկան հավելաճի տեմպը և ՀՀ մրցունակության համաթիվը, առկա է դրական կախվածություն, այն դեպքում, որ իրական հատվածում ՕՈՒՆ-երի տարեկան հավելաճի տեմպը, անկախ այդ դրական տեղաշարժերի, բացասական միտում է ունեցել:

Աղյուսակ 2. Ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտող գործոնների և տնտեսական ցուցանիշների համեմատությունը

	2010	2012	2014	Միջին 2009-2014
Կոռուպցիայի ցուցանիշի փոփոխությունը տոկոսային կետով	-0.7	-3	1	-0.18
Հարկային կարգավորման ցուցանիշի փոփոխությունը տոկոսային կետով	1.5	-4	3	-0.23
Պետական բյուրոկրատիայի ցուցանիշի փոփոխությունը տոկոսային կետով	-3.4	-0.4	-3.1	-0.02
Ֆինանսավորման հասանելիության ցուցանիշի փոփոխությունը տոկոսային կետով	-1.3	4.3	0.5	0.90
Հարկային դրույթաչափեր	1.1	-1.7	1.1	1.10
Ենթակառուցվածքների ոչ ադեկվատ սպասարկում	3.6	-0.7	-2.3	-0.27
Արտարժույթի կարգավորում	1.7	-0.4	1	-0.75
ՅՆԱ տարեկան իրական աճ ⁸ ,%	2.2	7.2	5.2	1.55
ՀՀ մրցունակության համաթիվ ⁹	0.05	0.13	-0.09	0.05
Իրական հատվածում ՕՈՒՆ-երի տարեկան հավելաճ, % ¹⁰	-34.0	-10.1	29.1	-10.57

⁸ <http://www.mfe.am/index.php?cat=69&lang=1>

⁹ հաշվարկվել է հեղինակի կողմից, աղբյուրը “World Economic Forum” -ի Համաշխարհային մրցունակության 2008-2014թ. զեկույցներ (WEF Global Competitiveness Reports- 2008-2009, 2009-2010, 2010-2011, 2011-2012, 2012-2013, 2013-2014, 2014-2015)

¹⁰ հաշվարկվել է հեղինակի կողմից, աղբյուրը «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը (2009-2015թթ) հունվար-փետրվարին ,

Հատկանշական է ֆինանսավորման հասանելիության և հարկային դրույքաչափերի գործոնների և իրական հատվածում ՕՈՒՆ-երի տարեկան հավելաճի տեմպերի բացասական տեղաշարժերի համեմատությունը, ինչը ցույց է տալիս կրկին դրական կախվածություն, այն տրամաբանությամբ, որ հարկային դրույքաչափերի և ֆինանսական միջոցների հասանելիության հիմնախնդիրները չեն կարող կապած չլինել ՕՈՒՆ-երի հետ:

Այս փոխկապվածության օգտին է խոսում նաև այն փաստը, որ ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերով, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով, բազմիցս ընդգծվել է գործարար միջավայրի հրատապ բարելավման անհրաժեշտությունը: Դրա համար պետք է իրականացնել արագ բարեփոխումներ, որոնք զգալի կբարձրացնեն Հայաստանի գլոբալ մրցունակությունը և արդյունքում բարելավեն ՀՀ դիրքը Doing Business (Գործարարությամբ զբաղվելը) դասակարգման մեջ¹¹: Վերջինս գնահատում է գործարարությամբ զբաղվելու կարգավորման և վարչարարական ծախսերը 189 երկրների տնտեսություններում: Այն դիտարկում է կանոնակարգերի ազդեցությունը տիպային գործարար կյանքի տասը փուլերում՝ ընկերության հիմնադրման, շինարարական թույլտվությունների, աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման, սեփականության գրանցման, վարկերի ստացման, ներդրողների պաշտպանության, հարկերի վճարման, արտաքին առևտրի, պայմանագրերի կիրարկման, ձեռնարկության փակման/լուծարման: Առավել մարձր վարկանիշը ենթադրում է գործարարությամբ զբաղվելու համար ստեղծված առավել բարենպաստ միջավայր¹²: Հեղինակավոր այս զեկույցն ուղեկիշ է համարվում երկրների ներդրումային գրավչությունը չափելու և ներդրողների կողմից այս կամ այն երկրում գործարարությամբ զբաղվելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:


Լավագույն արդյունքից հեռավորության ցուցանիշն իրենից ներկայացնում է “Doing Business” դասակարգման ցուցիչների շրջանակներում, բացարձակ անթերի սահմանային 100 բալանոց սանդղակում, երկրի գրանցած ցուցանիշը: Ինչպես տեսնում ենք գծապատկերում, ՀՀ-ն 70.6 ցուցանիշով գերազանցում է ԵՄ այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունաստանը և Ռումինիան, սակայն հետ է մնում Վրաստանից, որը մեր տարածաշրջանում, արդեն

¹¹ «ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2014թ. միջոցառումների ծրագիրը» http://armef.com/news/category/comment/article/article_1392921053

¹² Պարույր Զանգուլյան «Գործարարությամբ զբաղվելու հիմնախնդիրները ՀՀ-ում, ինչ փոփոխություններ պետք է կատարվեն» Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա , #5. մայիս, 2008, էջ 35

մի քանի տարի է, շուկայական և ժողովրդավարական վերափոխումների լավագույն առաջամարտիկն է:

Հայաստանը 2014թ-ին «Doing Business» ծրագրի կողմից 189 երկրների տնտեսությունների շարքում դասակարգվել է 45-րդ տեղում՝ ըստ գործարարությամբ զբաղվելու ընդհանուր դյուրինության ցուցանիշի (գծապատկեր 1):




Գծապատկեր 1.¹³ 2014թ ՀՀ դիրքը «Doing Business» դասակարգման մեջ

Այն փաստը, որ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի 2013թ. հոկտեմբերի 29-ին հրապարակած՝ «Doing Business 2014, Կարգավորումների ընկալումը ՓՄՁ-ների համար» վարկանիշային զեկույցի տվյալներով, Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում էր 37-րդ տեղը¹⁴, իսկ 2015թ-ի զեկույցի համաձայն 45-րդ, ամենևին չի նշանակում, որ ՀՀ-ն անկում է գրանցել: Վերջինս հիմնականում պայմանավորված են լինում հաշվարկման մեթոդաբանության փոփոխությունների ինչպես նաև տարբեր տեխնիկական սխալների հետ:


¹³ Doing Business 2015, Armenia, a World Bank Group Flagship Report, pg 8

¹⁴ «ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2014թ. միջոցառումների ծրագիրը» http://armef.com/news/category/comment/article/article_1392921053 կամ «Doing Business 2014» Report <http://www.doingbusiness.org/~media/GIAWB/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB14-Full-Report.pdf>



Գծապատկեր 2.¹⁵ 2014թ-ին ՀՀ դիրքը Doing Business դասակարգման մեջ (ըստ գործարար կյանքի առանձին ցուցիչների)

Գծապատկեր 2-ում և 3-ում ներկայացված են, ըստ առանձին ցուցիչների, ՀՀ զբաղեցրած դիրքերը «Doing Business» դասակարգման մեջ, և հեռավորությունները լավագույն արդյունքներից, որտեղից երևում է, որ լավագույն արդյունքը (4-րդ տեղը 189 երկրների մեջ և լավագույն արդյունքի 100 բալանոց սանդղակում 97.77 ցուցանիշ) գրանցվել է «Ընկերության հիմնման» փուլում: «Doing Business» դասակարգման մեջ դիրքի վատագույն ցուցանիշն ունի «Էլեկտրականության ստացման» փուլը՝ 131-րդ տեղը 189 երկրների մեջ, իսկ լավագույն արդյունքի 100 բալանոց սանդղակում վատագույն արդյունքը գրանցվել է «Սնանկության ճանաչման» ցուցանիշի դեպքում՝ 48.14:



Գծապատկեր 3¹⁶ 2014թ-ին ՀՀ Doing Business գործարար կյանքի փուլի առանձին ցուցիչների հեռավորությունը լավագույն արդյունքից

¹⁵ Doing Business 2015, Armenia, a World Bank Group Flagship Report, pg 9

Այս ցուցիչների ընտրության տրամաբանությունն այն է, որ գործարար և ներդրումային միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, ապահովել հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն: Վերջին տարիների ընթացքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության նախաձեռնած մի շարք օրենսդրական փոփոխությունների արդյունքում կարելի է ասել, որ իրավական շատ ակտեր համապատասխանում են միջազգային լավագույն փորձին, չնայած որ, դեռևս չվերանայված ու չարդիականացված իրավական ակտերը լուրջ խոչընդոտ են ներդրումների ներգրավման համար: Առաջնային խնդիր որպես պետք է նայել, Կարգավորման ազդեցության գնահատման /ԿԱԳ¹⁷/ արդյունավետ համակարգի ներդրումը, որի արդյունքում կնվազեն իրավական ակտերից բխող ծախսերը գործարար միջավայրի համար: Վերջինս կոչված է գնահատել նաև իրավական ակտերի կիրարկումից հետո առաջացող իրական ծախսերը, հետևանքները և կառավարության համար միջոց է ընտրելու խնդրի հնարավոր լուծումներից որևէ մեկը¹⁸:

ՀՀ գործարար միջավայրի բարելավման գործընթացում իր կարևորագույն դերակատարումն ունի *կարգավորող գիյոտիինի* կիրառումը, որպես բարեփոխումների ամենահայտնի նորամուծություն: Այն նախատեսված է այն իրավիճակների համար, երբ կառավարությունները ձգտում են բիզնես միջավայրն առավել մրցունակ դարձնել փոփոխվող շուկաներում: Այս գործընթացը մեր մոտ իրականացվում է Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի կողմից, որը նաև ձեռնարկատիրության ոլորտում առաջարկությունների ձևով, փորձում է կրճատել գործարարությամբ զբաղվելու ծախսերն ու ռիսկերը՝ նպատակ հետապնդելով թարելավել մրցունակությունը, խթանել ներդրումների և աշխատատեղերի ստեղծմանը: Կառույցն իր գործունեության ընթացքում նկարագրում է պետության հետ բիզնեսի և քաղաքացիների փոխհարաբերությունները, համադրում դրանք միջազգային լավագույն փոր-

¹⁶ Doing Business 2015, Armenia, a World Bank Group Flagship Report, pg 9

¹⁷ ԿԱԳ-ն նորմատիվ իրավական ակտերից (օրենքներ և ՀՀ կառավարության որոշումներ) առաջացող հնարավոր ծախսերի, հետևանքների և կողմնակի ազդեցությունների գնահատման վերլուծական մոտեցում է

¹⁸ Ալբերտ Բադալյան «Բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված կարգավորման ազդեցության գնահատման /ԿԱԳ/ գործիքը», Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա , #7/157/, հուլիս, 2013, էջ 10

ծի հետ, կարգավորման բեռի թեթևացման¹⁹ նպատակով համապատասխան պետական կառավարման մարմինների հետ պատրաստում առաջարկությունների փաթեթ, այն քննարկում բիզնես ոլորտի, հասարակական կազմակերպությունների հետ և ներկայացնում Բարեփոխումների խորհրդի հաստատմանը²⁰: Այս համակարգի արդյունավետության մասին է խոսում այն փաստը, որ, օրինակ Հարավային Կորեան 11 ամսում վերանայելով շուրջ 11,000 կարգավորող ակտ, կրճատեց դրանց գրեթե կեսը, ինչը նպաստեց մեկ միլիոն նորաշխատատեղերի ստեղծմանը և 36 մլրդ ԱՄՆ դոլլարի ՕՈՒՆ-ների (օտարերկրյա ուղղակի ներդրումներ) ներգրավմանը՝ որպես բիզնեսի շուկա մտնելու ավելի քիչ խոչընդոտների և համապատասխանության ծախսերի²¹:

Ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ ձեռնարկատիրական գործունեության խթանման և առկա խնդիրների լուծման գործընթացում պետք է առաջնորդվել երկու՝ ուղղակի և/կամ անուղղակի մեթոդներով, մասնավորապես՝ **նպաստավոր սոցիալ-տնտեսական միջավայրի ձևավորման և/կամ պոտենցիալ ձեռնարկատերերին սատարելու** և ուղղակի օժանդակելու միջոցով: Առաջին դեպքում եթե խոսքը գնում է ենթակառուցվածքային համակարգի թերությունների վերացման, պետության իրավական հիմքերի ամրապնդման, ստվերային կառույցների զարգացման կասեցման, տնտեսական մեխանիզմների գործունեության բարելավման, ազգային արժույթի կայունության ապահովման և այլ մակրոխնդիրների մասին, ապա երկրորդ դեպքում պետք է միկրոմիջավայրում առկա խնդիրների վրա՝ մասնավոր ձեռնարկատերերին շուկայական տնտեսության հիմունքների և կառավարման մեթոդների ուսուցում, նորարարական գործունեությանն օժանդակում և ֆինանսական օգնության տրամադրում, արտադրական ենթակառուցվածքի կատարելագործում և այլն:

¹⁹ Ծրագրի արդյունքում կկրճատվի կարգավորում պարունակող իրավական ակտերի նվազագույնը 30 տոկոսը, մնացած կարգավորումների 20-30 տոկոսն էականորեն կպարզեցվի, ինչի արդյունքում զգալիորեն կնվազի բիզնեսի և քաղաքացիների ուսերին ընկնող ֆինանսական բեռը

²⁰ <http://www.regulations.am/am/national-centre-for-legislative-regulation>

²¹ Ալբերտ Բադայան «Բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված գործիքակազմի ազդեցությունը բիզնես միջավայրի վրա», Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա , #7-8/169-170/, հուլիս-օգոստոս, 2014, էջ 19

Լևոն ԴՈԽՈԼՅԱՆ

Ձեռնարկատիրության զարգացման հիմնական խոչընդոտները ՀՀ-ում

Բանալի բառեր. բիզնես միջավայր, ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտներ, ձեռնարկատիրական ռիսկ

Հոդվածում ներկայացված են ՀՀ ձեռնարկատիրության զարգացման հիմնական խնդիրները: Խոչընդոտների թվարկումը կատարվել է տեսական վերլուծությունների և գործնական փորձի հետազոտման արդյունքում, ինչը ապահովել է համապատասխան իրավիճակի գնահատման օբյեկտիվությունը և անժամանակավրեպ արդյունքը: Ձեռնարկատիրության խոչընդոտների հաղթահարման, տնտեսական զարգացման, ընդհանուր բիզնես միջավայրի բարելավման գործընթացները դիտարկվել են պետություն-բիզնես գործընկերության և համագործակցության տեսանկյուններից:

Levon DOKHOLYAN

The main obstacles to business development of RA

Keywords: business environment, obstacles of developing entrepreneurship, entrepreneurial risk, Doing Business, assessment of regulatory impact

The general problems and barriers restraining business development in Armenia are listed. The given list is generated by author on the basis of the theoretical analysis and practical experience, therefore research is adequate, duly and objective. The processes of overcoming the barriers to entrepreneurship, economic development, overall business environment improvements are monitored in the view of the state business cooperation and partnership.

Левон ДОХОЛЯН

Основные препятствия для развития предпринимательства в РА

Ключевые слова: бизнес-среда, препятствия развитию предпринимательства, предпринимательский риск, Ведение бизнеса, оценка регулирующего воздействия

Приведен наиболее полный перечень общих проблем и барьеров, сдерживающих развитие малого предпринимательства в Армении. Перечень сформирован авторами на основе теоретического анализа и изученного практического опыта, что обеспечивает его адекватность, своевременность и объективность и отражает ситуацию, сложившуюся в настоящее время вокруг предпринимательства. Процессы преодоления барьеров на пути предпринимательства, экономического развития, и в целом улучшения общего бизнес-среды, рассматриваются с точки зрения государственной делового сотрудничества и партнерства.